

«Միսիթար Սեբաստացի» կրթահամալիր

Ընթերցարան

2-րդ դասարանի համար

Մաս 1-ին

2021 թվական



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Աթարեկ Խնկոյան, Ես	3
Լև Տոլստոյ, Բարակ թէլ	6
Ստեփան Լիսիցյան, Հնարագետ նապաստակը	8
Տեղեկատվական տեքստեր, Արև, Լուսին, Աստղեր	11
Փոխադրություն, Ամպի երեխաները	13
Դռնալդ Բիսեթ, Անձրևը	17
Խոսք՝ Հ. Թումանյանի, Երաժշտություն՝ Կոմիտասի, Եղնիկ	21
Խոսք՝ Հ. Թումանյանի, Երաժշտություն՝ Կոմիտասի, Կաքավիկ.....	23
Կոմիտաս, Աշուն օր.....	25
Աթարեկ Խնկոյան, Անտերև ծառը	28
Աթարեկ Խնկոյան, Ճպուռն ու մրջյունը	31
Աթարեկ Խնկոյան, Խխունջն ու սունկը	37
Համբ Սահյան, Աշուն	40
Լավաշի մասին.....	43
Զաննի Ռոդարի, Թարս հարցեր	46
Աթարեկ Խնկոյան, Չմեռ	49
Դռնալդ Բիսեթ, Պահմտոցի	51
Փոխադրություն, Չմեռ	54
Գեղամ Սարյան, Փափուկ ձյուն	56
Տեղեկատվական տեքստ, Ինչի՞ց է առաջանում ձյունը	59
Հովհաննես Թումանյան, Մի բաց նամակ ամենքին	60
Դռնալդ Բիսեթ, Մոռացված ծննդյան օրը.....	62

ԵՍ

Բարեկանություն՝ ես —————:


Ես ————— տարեկան եմ:

Ապրում եմ —————:

Իմ հասցեն է՝ —————:

Ես սիրում եմ —————:

Սա ես եմ:



«Ես» նախագիծ
Աթարեկ Խնկոյան

ԵՍ

Ագռավը մի խեցգետին բռնեց և նստեց ծառին: Խեցգետինն ուզեց ազատվի, կտցից **զատվի** ու ասավ նրան.

- Ուկեհատի՛կ ագռավ տատիկ, ո՞վ է մեզնից կեղտոտը:

Ագռավը սեղմեց կտուցը և կռոաց.

- Դո՛ւ...

- Ուկեհատի՛կ ագռավ տատիկ, ո՞վ է մեզնից նախշունը:

Ագռավը բացեց կտուցն ու կռոաց.

- Իհա՛րկե ես...

Կտուցը բաց անելուն պես խեցգետինը կտցից ընկավ ջուրը և իրեն ազատեց:

զատվել - ազատվել, առանձնանալ, պոկվել

Առաջադրանքներ

1. Ինչպիսի՞ն էր այս պատմության ազուրը: Շարունակի՞ր:

Ինքն իրենով հիացած, _____

2. Իսկ ինցգետինն ինչպիսի՞ն է:

3. Պակասող բառերը գրի՞ր:

Ազուրը մի ինցգետին _____ և ծառին _____:

Ինցգետինն _____ ազատվել ու ասաց.

- _____, ազուր տատիկ, ո՞վ է մեզնից _____:


Ազուրը կռոաց.

- _____, ազուր տատիկ, ո՞վ է մեզնից _____:

Ազուրը կտուցը _____ և ինցգետինը _____:

4. Նամակ գրիր կամ խորհուրդ տուր ազուրին:

-
-
5. Թվարկի՛ր քեզ ծանոթ թռչունների անուններ: Նկարի՛ր այս
բանաստեղծության խորամանկ հերոսին:



ԲԱՐԱԿ ԹԵԼ

Մի մարդ թել մանողին բարակ թել պատվիրեց: Սա էլ մանեց: Բայց, արի ու տես, որ մարդը չհավանեց ու ասաց.

- Ինձ շատ բարակ թել է պետք:

Մանողն էլ թե՝

- Եթե սա բարակ չէ, ահա քեզ ավելի բարակը,- և դատարկ տեղը ցույց տվեց: Մարդն ասաց, որ ինքը թել չի տեսնում:

- Ես էլ չեմ տեսնում, որովհետև թելը շատ բարակ է:

Հիմարն ուրախացավ, այդ թելից էլի պատվիրեց՝ մեծ գումար վճարելով չեղած թելի համար:

Առաջադրանքներ

1. Ինչպիսի՞ մարդ էր թել պատվիրողը:

2. Դո՛ իրս զրիր խորամանկ միտք ունեցող նախադասությունը:

3. Ի՞նքն հորինիր:

Մանողն ու իր խորամանկ թելերը

ՀՆԱՐԱԳԵՏ ՆԱՊԱՍՏԱԿԸ

Մաս 1-ին

Լինում է, չի լինում, մի հայր նապաստակ է լինում: Մի օր նապաստակը տնից դուրս է գալիս, տեսնում է տան շորս բոլորն աղվեսներն են վազվզում:

- Վա՛յ իմ զլիսին, հիմա ի՞նչ պիտի անեմ, իմ փոքրիկներին ինչպե՞ս սրանց ձեռքից ազատեմ,- ասում է նապաստակը:

Բայց հայրիկը փորձված նապաստակ է: Անպատճառ մի ձար կգտնի: Պստիկ շլդիկը նայում է ու զարմանում, թե այս ի՞նչ է անում հայրիկը. Ներկերը հանել է, մի տախտակ է դրել իր առջև և վրձինով ինչ-որ զրում է: Տեսնես այդ ի՞նչ է զրում:

Մաս 2-րդ

Հայրիկը տախտակը տարավ, տնկեց հենց իրենց տան զլիսին ու սուս ու փուս մտավ ներս: Գալիս է աղվեսն ու կարդում. «Այստեղ ապրում է պարոն Չունը: Ով գայլի կամ աղվեսի տեղը գիտի, ինդրեմ իմաց տա»:

- Վա՛յ, տունս քանդվեց,- կանչում է աղվեսն ու լեղապատառ փախչում:
- Ա՛յ կնիկ, երեխանե՛ր, ժողովո՛ւրդ: Պարոն Չունը մեր անտառում է բնակվել: Վե՛ր կացեք, զլիսներս ազատենք, շո՛ւտ, քոչենք հեռո՛ւ, հեռո՛ւ...

Այս թեսակի նախատակները:

Կեցցե՛ մեր հնարագետ հայրիկը:

Առաջադրանքներ

1. Որտե՞ղ է ապրում նապաստակի ընտանիքը. ընդգծի՛ քաշտականը:

գյուղում, քաղաքում, անտառում, դաշտում

2. Ինչպիսի՞ն էր հայր նապաստակը: Տեքստում ընդգծի՛ այդ նախադասությունը:

3. Առանձնացրո՛ւ վայրի և ընտանի կենդանիներին և զբի՛ քամապատասխան տողերում: Թվարկի՛ թի՛ ի՞նչ վայրի և ընտանի կենդանիներ գիտես:

Վայրի կենդանիներ

Ընտանի կենդանիներ

4. Ինչպիսի՞ն է հայր աղվեսը:

5. Ինչպե՞ս կբացատրես:

Չեռքից ազատել, ճար գունել, իմաց տալ, լեղապատառ փախչել:

6. Հորինի՛ր:

Ա) Ինչո՞ւ են նապաստակի ականջները երկար:

Բ) Ինչո՞ւ ականջները նապաստակ ունեն:

Գ) Ինչո՞ւ է աղվեսի լեզուն երկար:

Դ) Ինչո՞ւ երկար լեզուն աղվես ունի:

ԱՐԵՎ (տեղեկատվական տեքստեր)

Ամեն օր Արևը դուրս է գալիս, ու լույսը բացվում է, իսկ երբ մայր է մտնում, օրը մթնում է: Իրականում մեր երկրագունդը պտտվում է Արևի շուրջը, և Արեգակն է լուսավորում Երկիրը: Արևը նաև տաքություն է տալիս մեզ: Եթե Արեգակը չլինի, Երկրի վրա ամեն ինչ կսառչի: Ե՞ւ բույսերը, և՝ կենդանիները, և՝ մարդիկ չեն կարողանա ապրել առանց լույսի ու ջերմության, ինչպես և՝ առանց օդի:

ԼՈՒՍԻՆ

Երկնքում Արևն ու Լուսինը նույն մեծության են թվում: Բայց չէ՞ որ ամեն ինչ հեռավորությունից է կախված: Արևը մեզանից շատ ավելի հեռու է, քան Լուսինը: Դրա փոխարեն այն ավելի մեծ է Լուսնից: Լուսինը շատ մուգ գույնի է և ծածկված է մեծ ու փոքր փոսերով: Լուսնի վրա նաև լեռներ կան: Փոսերը մեզ երևում են մուգ կետերի տեսքով: Լեռներն էլ սրագագաթ չեն, մի տեսակ կլոր տեսք ունեն: Լուսնի վրա ո՛չ օդ կա, ո՛չ ջուր: Պարզ է, որ այնտեղ կյանք չի կարող լինել: Լուսինն իր լույսը չունի,

այն ընդամենը փոխանցում, **անդրադարձում** է Արևի՝ իր վրա ընկած լույսը:

սավառնել - թռչել

սրազագաթ – սուր գազաթով

անդրադարձնել- ետ դարձնել, արտացոլել

ԱՍՏՂԵՐ

Երբ Արևը մայր է մտնում, երկինքը մթնում է, և այնտեղ հայտնվում են աստղերը: Դրանք անթիվ են: Այնքան շատ, որ ինչքան էլ ուզենանք, չենք կարողանա հաշվել: Բայց գիտե՞ք, որ իրականում աստղերն ել Արևի նման մեծ են, Արևի նման պայծառ ու տաք: Այսինքն՝ նրանք բոլորն ել վիթխարի գնդեր են, ինչպես Արևը:

Վիթխարի - շատ մեծ, հսկա

Առաջադրանք

1. Հորինի՛ք հանելուկներ արևի, լուսնի, աստղերի մասին,
մուտքագրի՛ք, Paint նկարչական ծրագրով նկարի՛ք և ուղարկի՛ք իմ
կեկտրոնային հասցեին:

ԱՄՊԻ ԵՐԵԽԱՆԱԾՈՅ

(փոխադրություն)

Մաս 1-ին

Ամպը չորս երեխա ունի: Չորսին կլավ ձանաշում եք:

Մեծը հաճախ է գալիս, խփում տանիքներին, աղմկում տանիքների վրա:
Երբեմն էլ կարծես զժվում է՝ թափվում է ու թափվում, գետերն էլ լցվում,
դրանք էլ **հորդանում** են, ափերից դուրս գալիս, ծածկում ամեն բան:
Նա վատը չէ, ընդհակառակը՝ այնպէ՞ս է ծառ ու ծաղիկ սիրում, իջնում
է, **զովացնում** ծարավ կանաչներին, ջուր տալիս չորացած հողին:

Մաս 2-րդ

Նրա քույրը Ճերմակ աղջիկ է: Ցրտերը վրա հասնելուն պես փռում է իր
փափուկ վերմակը **մերկ** անտառների ու դաշտերի վրա, որ փոքրիկ
սերմերը չմրսեն հողի տակ:

Մաս 3-րդ

Բայց ի՞նչ չար է սրանց եղբայրը: Գալիս է քամու հետ, որն իր նման
խենթ է, փշրում է ծառ ու ձյուղ, փշացնում արտ ու խոտ՝ իբր թե կատակ է
անում:

Մաս 4-րդ

Բոլորից փոքրը պստիկ, քնքուշ աղջիկ է: Գարնանը զիշերներին մարգարիտներ է շարում ծաղիկների ու խոտերի թերթերին: Զմռան ցրտին նա մեր պատուհանների ապակիներին իր պաղ մատիկներով գեղեցիկ նախշեր է գծում:

Ահա՝ ամպի չորս երեխաները՝ Անձրևը, Ջունը, Կարկուտը և Ցողիկը: Ասացի չէ՝, որ չորսին էլ լավ եք ճանաչում:

հորդանալ - վարարել, շատանալ
զովացնել - զով դարձնել, հովացնել
մերկ - առանց զգեստ, տկլոր

Առաջադրանքներ

1. Ինչպիսի՞ն էին՝

Անձրևը

Ջունը

Կարկուտը

Ցողիկը

2. Նկարի՞ն քեզ դուր եկած հերոսին:



2. Ընդգծված բառերի կողքին իմաստով մոտ այլ բառեր գրի՞ն:

Նրա քույրը **Ճերմակ** (-----) աղջիկ է:

Զմռան ցրտին նա մեր **պատուհանների** (-----) ապակիներին իր պաղ
մատիկներով **գեղեցիկ** (-----) նախշեր է գծում:

3. Նամակ գրի՝ ը ամսյի երեխաներին:

ԱՆՁՐԵՎԸ

Մաս 1-ին

Վտվտիկն ու Կտկտիկը ամպեր էին և երկնքում էին ապրում:
Նրանք ամբողջ օրը իրենց համար այս ու այն կողմ էին թռչում ու ոչ մեկին
չէին խանգարում: Արևն էլ իր համար էր շողում, թռչունները երգում էին,
երեխաները՝ խաղում:

- Վտվտի՝կ, չիշնե՞նք ներքև և բոլորին մի լավ ջրենք,- ասում է Կտկտիկը:
- Իշնե՞նք, թե չէ պարապ-սարապ թռչելը ձանձրալի է:

Մաս 2-րդ

Նրանք իջան և թրջեցին գետինը: Իսկ մարդիկ դժգոհ էին:
- Ի՞նչ թարս եղանակ է,- փնթփնթում էին նրանք:
- Կարծես դույլերով ջուր թափեն, ա՞յ քեզ տիտր օր:
- Է՞, արի գնանք այստեղից, - հուսահատվում է Կտկտիկը:

Նրանք թռչում – գնում են, և անձրևը կտրվում է:

Մաս 3-րդ

Բոլորը զնի էին: Ամեն օր արևը շողում էր, շոգն էլ՝ օրեցօր ուժեղանում:
Երկար ժամանակ ոչ էլ անձրև էր գալիս: Խոտերը դեղնում և չորանում

են, ծաղիկները՝ թառամում: Կովերը մնում են առանց խոտի և կաթ չեն տալիս: Պաղպաղակ պատրաստողը չի կարողանում կաթ գնել, որ պաղպաղակ պատրաստի: Երեխաները լաց են լինում և պաղպաղակ ուզում: Նրանք հագնում են բաճկոնները, բացում հովանոցները և դուրս գալիս փողոց: Ամպերը տեսնում են ու զարմանում.

- Տեսնես ի՞նչ է եղել:


Նրանք իշնում են ներքև, ու նորից հորդ անձրև է գալիս:

- Ի՞նչ հաճելի անձրև է,- ուրախանում են բոլորը:

- Վերջապե՞ս, ա՞յլավ օր:

Բոլորը գոհ են՝ և՝ Վտվտիկն ու Վտկտիկը, և՝ երեխաներն ու մեծերը:

Ամպի երեխաները



Առաջադրանքներ

1. Պատմի՛ր ամպիկների մասին:

1. Երբ ամպիկները հեռացան, ի՞նչ պատահեց:

3.Նամակ գրի՛ր Կտկտիկին ու Վտվտիկին ու պատմի՛ր, թե անձրևի ժամանակ դու ի՞նչ ես անում:

Նամակդ ուղարկի՛ր իմ կեկտրոնային հասցեին:

4. Paint նկարչական ծրագրով նկարի՛ր Կտկտիկին ու Վտվտիկին:
Նկարդ ուղարկի՛ր իմ կեկտրոնային հասցեին:

5. Ինչպիսի՞ն էին Վատվտիկն ու Կտկտիկը: Նրանց ուրիշ ի՞նչ անուններ կղնես:

6. Շարունակի՛ք:

Բոլորը գոհ են՝ և՝ Վատվտիկն ու Կտկտիկը, և՝ Երեխաներն ու մեծերը, մեկ կանկարծ _____

«Կոմիտասյան օրեր» նախագիծ

ԵՂԱԿ

Խոսք՝ Հ. Թումանյանի, երաժշտություն՝ Կոմիտասի

- Եղնի՛կ, դու ո՞ր սարն ես արծել:

- Ասիս -Մասիս սարն եմ արծել:

- Եղնի՛կ, դու ո՞ր ջուրն ես խմել:

- Սառն աղբյուրի ջուրն եմ խմել:

- Եղնի՛կ, դու ո՞ր սարն ես քնել:

- Հայոց Անի սարն եմ քնել:

- Եղնի՛կ, դու ո՞ր ծառն ես քերվել:

- Ծառ խընկենի ծառն եմ քերվել:

արծել - արածել

քերվել - քերել, քորել

Առաջադրանքներ

1. Լրացրո՞ւ բաց թողած բառերը:

- Եղնի՛կ, դու ո՞ր սարն ես **արծել**:
- Ասիս-Մասիս սարն եմ _____:
- Եղնի՛կ, դու ո՞ր ջուրն ես **խմել**:
- Սառն աղբյուրի _____ եմ **խմել**:
- Եղնի՛կ, դու ո՞ր սարն ես **քնել**:
- Հայոց Անի սարն եմ _____:
- Եղնի՛կ, դու ո՞ր ծառն ես **քերպել**:
- Ծառ խընկենի ծառն եմ _____:

2. Ի՞նչ գիտես եղնիկի մասին, պատմի՞ր:

3. Նկարի՞ր բանաստեղծությունը:

ԿԱՔԱՎԻԿ

Խոսք՝ Հ. Թումանյանի, Երաժշտություն՝ Կոմիտասի

Արև բացվեց թուխ ամպերեն,
Կաքավ թըռավ կանաչ սարեն,
Կանաչ սարեն՝ սարի ծերեն,
Բարև բերավ ծաղիկներեն:

Սիրունի՛կ, սիրունի՛կ,
Սիրունիկ, նախշուն կաքավիկ:


Քո բուն հյուսած ծաղիկներով,
Շուշան, նարգիզ, նունուֆարով,
Քո տեղ լլցված ցող ու շաղով,
Քընես-կելնես երգ ու տաղով:

Սիրունի՛կ, սիրունի՛կ,
Սիրունիկ, նախշուն կաքավիկ:

Քո թև փափուկ ու խատուտիկ,
Պըստի կըտուց, կարմիր տոտիկ,
Կարմիր-կարմիր տոտիկներով,
Կը շորորաս ձուտիկներով:

Առաջադրանքներ

1. Բանաստեղծությունից դո՞ւրս գրիր քեզ դուր եկած քառատողը և նկարի՛ ր:



2. Շարունակի՛ ր:

- ԱՇ կաքավ, _____

_____ :


Աշուն օր

(հատված)

Կոմիտաս

Սևուկ ամպեր վար եկան
Օրան, օրան,
Սարի վրա շար եկան:
Ծագեց առավոտ
Պաղեց, սառավ օդ:

Տեղաց անձրև մաղ տալով,
Մարմանդ-մարմանդ,
Հոգնած տերև շաղ տալով:
Երկիր քուն դրավ,
Եվ թռչուն թռավ:



Առաջադրանքներ

1. Տողերի փոխարեն մուտքագրի՞ր պակասող բառերը:

Սևուկ _____ վար եկան

Օրան, օրան,

Սարի վրա շար _____:

Ծագեց առավոտ

Պաղեց, սառավ _____:

Երկիր քուն դրավ,

Եվ _____ թռավ:

1. Կազմի՞ր «աշնանային» բառախմբեր:

Նմուշ՝

Ինչպիսի՞ աշուն-գեղեցիկ աշուն

_____ տերև

_____ ամպ

_____ օղ

_____ եղանակ

_____ օր

3. Բառերը ձիշտ դասավորի՛ր և նախադասություն կստանաս:

սարի Ամպը կատարին նստեց

ծառի ցած ճյուղերից Տերևները թափվեցին

չվեցին երկրներ թռչունները տաք

4. Բառերն այբբենական կարգով դասավորի՛ր:


Օր, տերև, աշուն, սար, անձրև:

«Խնկոյանական օրեր» նախագիծ

Աթարելի Խնկոյան




ԱՆՏԵՐԵՎ ԾԱՌԸ

Փշեց ցուրտ քամին,
Եկավ մեզ, մշուշ.
Թերթերը թափեց
Ծաղիկը քնքուշ:
Անտերև ծառը
Ճյուղերը ճռճեց.
Աշնան քամու հետ
Կանգնեց ու վիճեց.
- Հե՞՞ թերևներս
Մեկ-մեկ պոկեցիր
Ու աչքիս առաջ
Գետին ածեցիր:



Առաջադրանքներ

1. Բանաստեղծությունից դուքս գրիր ամենակարևոր 3 բառերը և նկարի՛ք:



2. Բանաստեղծության ինչպիսի՞ն էին քամին, ծաղիկը, ծառը:

քամի

ծաղիկ

ծառ

3. Երբ աշնան քամին եկավ, ի՞նչ պատահեց ծառի ու ծաղկի հետ:

4. Շարունակի՞ք:

քամի – քամիներ

ծառ —————

տերև —————

ցողուն —————

ձյուղ —————

5. Բառերը դասավորի՞ք այբբենական կարգով:

ծաղիկ, քամի, աշուն, տերև, մշուշ, ձյուղ, գետ, թերթ, ցողուն, սերմ

ՃՊՈՒՈՆ ՈՒ ՄՐՁՅՈՒՆԸ

Մաս 1-ին

Թռի-վոհ

Նկարի՞ն բանաստեղծության ուրախ հատվածը:

Մի ձպուռ,

Ողջ ամառը

Շուռ ու մուռ,

Երգեց, ձռաց.

Ճոճոաց:

Մին էլ, ըհը՝,

Զմեռը,

Փոեց իրա

Թևերը.

Բացեց գորգը

Սպիտակ,

Դաշտերն առավ

Զյունի տակ:

Անցան պայծառ օրերը,

Էլ ո՞ րն ասեմ,


Էլ ո՞ րը,

Երբ ամեն մի

Թփի տակ

Թե սեղան կար:

Թե օթյակ:



Մաս 2-րդ

Եկան օրեր

Ցրտաշունչ,

Ճպուռն ընկավ

Լուռ ու մունջ.

Քաղցած փորին

Էլի՞նչ երգ,

Ցուրտը տարավ

Ուտ ու ձեռք:

Զընզր-զընզր

Դողալով,

Ծանր-ծանր

Սողալով

Նա մրջունին

Ասում էր.

- Գլխիդ մատաղ,

Սանամե՞ր,


Մի ճա՞ր արա

Շունչ առնեմ,

Ցրտից, սովից

Չմեռնեմ:


Նկարի՞ր բանաստեղծության տիտուր հատվածը:



Կերակրի՝
Տաքացրո՞ւ,
Մինչև գարուն
Ապրեցրո՞ւ:

Մաս 3-րդ

- Ի՞նչ խաբար է, Նկարի՞ր բանաստեղծության զարմանալի հատվածը:
Սանիկս,
Զարմանում եմ,
Զանիկս,
Զաշխատեցի՞ր
Ամառ,
Ասա՛, ինչն էր
Պատճառը:
- Էդպես բանի,
Սանամե՞ր,
Էլ ժամանակ
Ո՞վ ուներ.
Էն խոտերում
Բուրավետ
Երգում էինք
Մերոնց հետ...
- Ուրեմն դո՞ւ ...
- Այն՛, ես



Նկարի՞ն բանաստեղծության ավարտը:

Ողջ ամառը

Դեն ու դես

Երգում էի

Մշտապես:

- Երգո՞ւ մ էիր...


Շատ բարի,

Այժմ էլ բռնի

Վեր-վերի,

Քամին ծափ տա,

Դու պարի՞ :



Առաջադրանքներ

1. Թվարկի՞ր բանաստեղծության հերոսներին:

2. Պատմի՞ր բանաստեղծության հերոսների մասին:

3. Գտի՞ր սխալները:

Թոփ-վոի մի մրցյուն, _____

Ողջ ձմեռը շուրջումուռ, _____

Սողաց, դողաց, դողդողաց, _____

Մին էլ, ըհը, ամառ, _____

Փոեց իրեն թևերը: _____

3. Գուշակի՞ք: Ի՞նքդ հորինիր հանելուկ ձպուռի ու մքջունի մասին:

Այն ի՞նչն է, ի՞նչը...

Փոքրիկ ու նուրբ մի միջատ է,

Աշխատում է անընդհատ:

4. Գտի՞ք սխալները:

Ա) Աշխատանքը տգեղացնում է մարդուն:

Բ) Ով աշխատի, նա չի ուտի:

5. Լրացրո՞ւ բաց թողած բառերը:

Անբանը հաց ուտելիս է առողջ, իսկ աշխատելիս՝ _____:

Ես աղա, դու աղա, _____:

Գործը վաղվան մնաց, իմացիր՝ _____:

ԽԽՈՒՆՁՆ ՈՒ ՍՈՒՆԿԸ

Նստել էր խխունջը սունկի վրա, բարկանում էր, նեղանում ու անցնող-դարձողին նախատում.

- Էս ի՞նչ է թոշկոտում **Ճպռոտ** ճպուոր, ասես չի կարող ինձ նման **ծանր ու մեծ** նստել:

Թիթեռները թոշկոտում են, թոշունները՝ ծլվում, խխունջը նորից կատաղում է.

- Մրանք ի՞նչ են թոշում, թոշկոտում, ի՞նչ են երգում, ել ուրիշ բան ու զործ չունե՞ն:

ԱՇ, ուրիշ բան եմ ես՝ ո՞չ թոշկոտում եմ, ո՞չ երգում: Թոշելս ո՞րն է, երգելս ո՞րը:

- Ե՛, քույրիկ խխունջ, - **հառաջում** է սունկը, - զիտե՞ս ինչո՞ւ ենք լուռումունջ մնացել էստեղ, ո՞չ թոշել զիտենք և ո՞չ ել՝ երգել:

նախատել - ամոթանք տալ, մեղադրել, հանդիմանել

Ճպռոտ - կեղտոտ, փնթի, անլվա

ծանր ու մեծ - լուրջ

հառաջել - տխուր ձայն հանել, հոգոց հանել, ախ քաշել

Առաջադրանքներ

1. Ինչպիսի՞ն էր խիստնջը: Ընդգծի՞ր ճիշտ տարբերակը:

բարկացկոտ, զվարթ, նախանձ, բարի, փնթփնթան

2. Գրի՞ր այս բառերի հակառակ նշանակություն ունեցող «ընկերներին»:

Նմուշ՝ երկար-կարճ

Մեծ —————

ծանր —————

տխուր —————

կեղտոտ —————

շատ —————

լայն —————

գեղեցիկ —————

3. Բառերը դասավորի՞ր այբբենական կարգով:

խիստնջ, բզեզ, թիթեռ, մոծակ, ճպուռ

4.Ինչպիսի՞ն են՝

a) բզեզը

b) խխունջը

c) ձպուռը

d) թիթեռը

6.Ինչո՞ւ էին լուսումունց մնացել սունկն ու խխունջը:

«Ուսումնական աշուն» նախագիծ

Համո Սահյան

ԱՇՈՒՆ

Աշնան օրերն են հասել,
Իջել է ամպը սարին,
Եվ հրաժեշտ է ասել,
Կռունկը մեր աշխարհին:


Բարդին ել չի սոսափում
Արագիլի թևի տակ,
Դեղին թերթեր է թափում
Առվակի մեջ կապուտակ:

Կարմիր խարույկ է կարծես
Ծեր տանձենին անտառի,
Թվում է, թե մոտ վազես,
Զեռք ու ոտքդ կվառի...

Քամին շատ էր թափառել
Պարապ-սարապ, թևը՝ կախ,
Բայց արդեն զործ է ձարել,
Տեսեք՝ ինչքա՞ն է ուրախ:
Սոսափել- խշխշալ, կամաց խշշալ

Առաջադրանքներ

1. Դուքս գրիր քեզ դուք եկած քառասողը և նկարի՞ք:



2. Այս տողերը փորձի՞ք բացատրել:

Ա) Բարդին էլ չի սոսավիում

Արագիլի թևի տակ:

Բ) Կարմիր խարույկ է կարծես

Ծեր տանձենին անտառի:

3. Աշնան մասին պատմի՞ք:

4.Տերևաթափ ծառ նկարի՞ք և նրա մասին պատմի՞ք:



«Մեքաստացու օրեր» նախագիծ

ԼԱՎԱՇԻ ՈՒԺԸ (ավանդապատում) Մաս 1-ին

Լավաշը հայկական ավանդական հաց է, որը թխում են թռնիրում:
Այն անալի սպիտակ հաց է, որը պատրաստվում է ցորենի ալյուրից:
Հայաստանում լավաշ հացը հայտնի էր դեռ երեք հազար տարի առաջ:
Արտաշատ քաղաքի պեղումների ժամանակ հայտնաբերվել է հնագույն
գետնափոր թռնիր: Լավաշն իսկական հայկական հաց է, այն թխում էին
կանայք: Թխում են հողի մեջ թաղված կավե գլանաձև փոսում, որը
կոչվում է թռնիր:

Մաս 2-րդ

Լավաշն աշխարհի ամենաերկար պահվող հացն է: Այն կարելի է պահել ավելի քան 1 տարի: Լավաշը կարելի է չորացնել և շատ երկար պահել, իսկ եթք թրջում են ջրով, այն կրկին թարմանում է: Հայկական խոհանոցում կան ազգային ուտեստներ, որոնք ուտում են միայն լավաշով:

Լավաշը համարվում է Հայաստանի խորհրդանշական մեկը, նրա մասին գրվել են բանաստեղծություններ, երգեր:

Առաջադրանքներ

1. Դո՞ւ գրիր անհասկանալի բառերն ու օնլայն բառարանի օգնությամբ բացատրի՞ր:

2. Ինչպե՞ս են թիտում լավաշը, պատմի՞ր:

Թթուղթիկ

1. Ի՞նչ բանջարեղեն են օգտագործում թթու դնելիս, թվարկի՛ք,
ընտրի՛ք դրանցից մեկը և ծիծաղելի պատմություն հռիխի՛ք:
2. Մտածի՛ք թթու բառեր: Այդ բառերից մեկով հռիխի՛ք թթու
պատմություն: Paint նկարչական ծրագրով նկարի՛ք: Հորինածդ
պատմությունը և նկարը ուղարկի՛ք իմ Էլեկտրոնային հասցեին:
3. Աղյուսակում գտի՛ք թթվի բաղադրիչները և ներկի՛ք:

ա	թ	Ց	օ	Ս	կ	Ղ	ա	ծ	Ա	զ
տ	կ	Ա	դ	Ա	մ	Բ	կ	ա	Վ	պ
լ	վ	Ս	ա	Պ	յ	Ի	զ	դ	Ա	դ
կ	ա	Ղ	ս	ու	լ	Ա	ս	կ	Պ	պ
ա	մ	Ս	ն	Ե	իս	Ու	ր	ա	Ի	ե
ն	գ	Ու	պ	Ն	ա	Ս	ի	կ	Ո	դ
ու	ա	Ս	ա	Ն	մ	Գ	ա	ա	Պ	ա
ս	զ	Ու	ս	Խ	տ	Ո	ր	դ	Տ	զ
ն	ա	Շ	ս	Ա	կ	Ք	պ	ա	ու	իս
ի	ր	Խ	դ	Ր	վ	Զ	ս	մ	Ս	ա
մ	ծ	Բ	ա	Զ	ու	Կ	լ	բ	Ր	ի

ԹԱՐՄ ՀԱՐՑԵՐ

(հատված)

Մաս 1-ին

Կար-չկար մի տղա, որն ամբողջ օրը սրան-նրան ձանձրացնում էր իր հարցերով: Հարցեր տալը, իհարկե, վատ բան չէ, ընդհակառակը՝ հարցասիրությունը գովելի է, բայց վատն այն էր, որ այդ տղայի հարցերին ոչ ոք չէր կարողանում պատասխանել:

Ասենք, գալիս էր ու հարցնում.

- Ինչո՞ւ դարակները սեղան ունեն:

Մարդիկ զարմանքից աչքերը չոռում էին կամ կ հենց այնպես պատասխանում.

- Դարակները նրա համար են, որ նրանց մեջ որևէ բան դնեն, օրինակ՝ սպասք, դանակ, պատառքաղ և այլն:

- Ես գիտեմ՝ ինչի համար են դարակները, բայց ինչո՞ւ դարակները սեղան ունեն:

Մարդիկ տմբտմբացնում էին գլուխները և հեռանում:

Մաս 2-րդ

Մի ուրիշ անգամ նա հարցնում էր.

- Ինչո՞ւ պոչը ձուկ ունի:

Կամ թե՝

- Ինչո՞ւ բեղերը կատու ունեն:

Տղան մեծանում էր, բայց շարունակում էր ինչուիկ մնալ, և այն էլ՝ ոչ թե սովորական, այլ՝ թարս ինչուիկ:

Առաջադրանքներ


Պատասխանի՛ք հարցերին:

1. Ինչո՞ւ կնձիթը փիղ ունի:

2. Ինչո՞ւ պոչը ձուկ ունի:

3. Ինչո՞ւ ամպերը նամակ չեն գրում:

-
-
4. Թարս բառերի ծառ նկարի՛ ը և բառեր հորինի՛ ու գրի՛ ը ծառի
ձյուղերին:



«Ուսումնական ձմեռ. Ամանոր» նախագիծ

Աթարեկ Խնկոյան

ԶՄԵՌ

Ծառը մերկացավ,
Զրկվեց տերևից,
Չյունի փաթիլներ
Իջան վերևից:

Չյուն ու ցուրտ եկան,
Առու, գետ լոեց,
Իր արծաթ գորգը
Չմեռը փոեց:

Չյունը **ծնկահար**
Նստեց մեծ ճամփին,
Սպիտակ հյուսերը
Կիտեց գետափին:

ծնկահար- ծնկներին հասնող

կիտել- կուտակել, դիզել, մի տեղ հավաքել

Առաջադրանքներ

1. Բացատրի՛ք:

Ծառը մերկացավ —————

Առու, գետ լոեց —————

2. Շարունակի՛ք լրացնել պակասող բառերը:

Ծառը մերկացավ,

Զրկվեց ————— :

Չյունի —————

Իշան ————— :

3. Պատասխանի՛ք հարցերին:

Նմուշ՝ (ինչպիսի՞ն) ծառ – չորացած ծառ

(ինչպիսի՞ն) ————— տերև

(ինչպիսի՞ն) ————— փաթիլ

(ինչպիսի՞ն) ————— ձյուն

(ինչպիսի՞ն) ————— գետ

ՊԱՀՄԱՑԻ

(հատված)

Մի անգամ Մութը որոշեց պահմտոցի խաղալ Լուսնի հետ:

Նա թաքնվեց մե՛րթ տների ետևում, մե՛րթ **ծխնելույզների** ետևում և շունչը պահած այսքան նստեց, մինչև Լուսինն անշտապ ու գողունի մոտեցավ ու գտավ նրան:

Երբեմն էլ Մութը դեսուդեն էր նետվում, նախքան կկարողանար թաքնվել ճանապարհն անցնող կատվի կամ շան ետևում: Եվ, ընդհանրապես, նա կարողանում էր ճարպկորեն թաքնվել Լուսնից: Բայց մեկ էլ Արևը ծագեց, ու փոխվեց ամեն ինչ...

ծխնելույզ- խողովակ, որտեղից դուրս է գալիս վառարանի ծուխը

անշտապ- առանց շտապելու

նահանջել- ետ գնալ, ետ քաշվել

Առաջադրանքներ

1.Պատմի՞ ըստ վերնագրերի:

Բայց մեկ էլ Արևը ծագեց ու...

Արևն ու Մութը

Լուսինն ու Սուրբ

2. Հորինի՛ք հանելուկ մութի մասին և նկարի՛ք:



ԶՄԵՈԸ

(փոխադրութուն)

Մաս 1-ին

- Օ՛ֆ, ե՞րբ պիտի անցնի այս անպիտան ձմեռը,- ասում էին մարդիկ:
- Օ՛ֆ, ե՞րբ պիտի վերջանա այս դաժան ձմեռը,- **բռղոքում** էին կենդանիները նեղ որչերում:
- Օ՛ֆ, ե՞րբ պիտի ազատվենք այս անտանելի ձմռան ձյունից,- տրտնջում էին թռչունները մերկ ձյուղերի վրա:

Մաս 2-րդ

Սաստիկ բարկացավ ձմեռը և որոշեց միանգամից ոչնչացնել ամենքին:

Զայն տվեց սառը քամիներին, կանչեց սառնամանիքներին, հավաքեց իր ամբողջ ուժը և հարձակվեց աշխարհի վրա:

Խորը ձյունով բռնեց բոլոր ճամփաները, սառուցով կապեց գետերը, սառցե սրեր կախեց տանիքներից ու ծառերից, սառցե վարագույրներ քաշեց պատուհաններին, ծածկեց բոլոր որդերի մուտքերը: Բայց իզուր:

Թռչունները կուչ եկան տների ծածկերի տակ, ծխնելույզների մոտ, տաք ձեղքերի մեջ ու ապրեցին:

Վայրի կենդանիները, հաստ մուշտակներ հազած, չվախեցան ձմռան բարկությունից, դուրս ելան՝ որս անելու:

Մարդիկ ամուր փակեցին պատուհաններն ու դռները, վառեցին վառարանները, տաք հագնվեցին ու գնացին իրենց գործին:

Մաս 3-րդ

Զմեռն այս քոլորը տեսավ ու հուսահատվեց:

Ցուրտը օր օրի թուլացավ, արևը գնալով ավելի տաքացավ, լսվեց ջրերի գլուղը, թռչունները երգեցին, դաշտերը քիչ-քիչ կանաչ հագան, ու մարդիկ բացեցին դուռ ու լուսամուտ:

Գարուն էր:

Առաջադրանքներ

1. Տրված բառերն ու արտահայտությունները համապատասխան տեղերում գրի՞ք:

Կատարել, կանաչել, իր գործով զբաղվել, կծկվել

Կանաչ հագնել _____

Սաստիկ բարկանալ _____

Կուչ գալ _____

Իր գործին գնալ _____

2. Բացատրի՞ք:

Ցրտահար լինել _____

Զայն տալ _____

Չյունով բռնել _____

ՓԱՓՈՒԿ ԶՅՈՒՆ

Չյո՞ւն, փափուկ ձյուն, սպիտակ ձյուն,
Զզո՞ւշ իշխր դաշտերին,
Ծաղիկները մտել են քուն,
Հողն է նրանց անկողին:

Հանդարտ, կամաց իշխր այսպես,
Ծաղիկները չարթնանան,
Ծածկիր նրանց քնքուշ ու հեզ,
Զզույշ, զզույշ անսահման:

Չյո՞ւն, փափուկ ձյուն, սպիտակ ձյուն,
Հանգիստ, խաղաղ իշխր վար,
Ծաղիկները մտել են քուն,
Ծաղիկները ցրտահար:


հանդարտ - խաղաղ, հանգիստ, մեղմ

հեզ - մեղմ, քննուշ

վար - ներքև

ցրտահար - ցրտից վնասված, ցուրտը տարած

Փափուկ ձյուն



Առաջադրանքներ


1. Բնչպիսի^o տրամադրություն է արտահայտված բանաստեղծության
մեջ, ընդգծի՛ք:

Խաղալ-անհանգիստ

ուրախ-տխուր

բարի-չարացած

2. Նկարի՛ք բանաստեղծությունը:



ԻՆՉԻ՞Ց Է ԱՌԱՋԱՆՈՒՄ ԶՅՈՒՆԸ

(տեղեկատվական տեքստ)

Ջան փաթիլը գեղեցիկ է, չէ՞: Երբ այդ փաթիլը տաքությունից հալչում է, ջուր է դառնում: Մտածե՞լ ես, թե ինչից է առաջանում ձյունը: Դու երևի գիտես, որ ամպը կազմված է ջրի մանր կաթիլներից: Այդ կաթիլները կարող են անձրև կամ ձյուն դառնալ և թափվել երկնքից: Եթե եղանակը ցուրտ չէ, կաթիլները անձրև են դառնում: Ցուրտ եղանակին կաթիլները վերածվում են փաթիլների:

Առաջադրանքներ

1. **Ճիշտ պատասխաններն ընդգծի՛ր:**

Ա. Ինչպիսի՞ն է ձյան փաթիլը:

Փափուկ, սպիտակ, սառը, կոպիտ, գեղեցիկ, տաք, քնքուշ, նուրբ, թաց:

Բ. Ինչի՞ց է առաջանում ձյան փաթիլը:

Ամպից, արևից, ջրի կաթիլներից, լուսնից:

Գ. Չրի կաթիլները երկնքում ե՞րբ են ձյան փաթիլներ դառնում:

Երբ շոգ է:

Երբ եղանակը տաք է:

Երբ ցուրտ է:

ՄԻ ԲԱՑ ՆԱՍՏԱԿ ԱՄԵՆՔԻՆ


Դաշտ ու անտառ, գյուղի ճամփան
Ծածկվել են մի թիզ ձյունով,
Էլ չի ճարվում ուտելու բան,
Ո՞վ էր տեսել էս տեսակ սով:
Ոչ մի ցորեն, ոչ մի հատիկ...
Խնդրում ենք ձեզ, բարի՝ մարդիկ,
Աստծու սիրուն, մի կտոր հաց,
Կոտորվեցինք, մեռանք սոված:

Շուտով կզան օրեր գարնան,
Մենք ձեզ համար կերգենք զվարք
Ու փոխարեն ձեր լավության՝
Ձեր պարտեզը, այգին ու արտ
Կմաքրենք մենք թրթուրներից,
Ճիճուներից ու որդերից,
Միայն հիմի մի կտոր հաց,
Կոտորվեցինք, մեռանք սոված:

*Մի խումք ծիտիկների կողմից՝
Ծիտիկ Ճնճղուկյան*

Առաջադրանքներ

1. Դուքս գրիր քեզ դուք եկած հատվածը և նկարի՞ք:



2. Ճնճղուկների մասին ի՞նչ գիտես, պատմի՞ք:

Մոռացված ծննդյան օրը

Մաս 1-ին

Կար-չկար, աշխարհում մի մեծ փիղ կար: Նա ապրում էր կենդանաբանական այգում՝ իր կնոջ ու Յալմար անունով ձագի հետ: Փիղ հայրը շատ մեծ էր: Մայր փիղն էլ էր մեծ: Դե, Յալմարն էլ փոքր չէր: Փղերն ընդհանրապես փոքր լինո՞ւմ են:

Մի գեղեցիկ օր էլ փիղ մայրիկը ու փղիկը տեսան, որ փիղ հայրիկը կանգնել է զլիսի վրա:

Մաս 2-րդ

- Ի՞նչ ես անում,— հարցրեց փիղ մայրիկը:
- Մի բան եմ ուզում հիշել,— պատասխանեց փիղ հայրիկը:
- Ի՞նչ ես ուզում հիշել:
- Եթե իմանայի, ել ինչո՞ւ էի չարչարվում,- ասաց փիղ հայրիկը:
- Յալմա՛ր,— ասաց փիղ մայրիկը տղային,— շո՛ւտ վազիր ու իմացի՛ք՝ ինչ է մոռացել հայրդ:

Մաս 3-րդ

Ու Յալմարը ճանապարհով վազեց: Հետո եղեգնուտի կողքի փոքր բլուրը բարձրացավ ու նստեց, որ հանգստանա, հետն էլ նայի, թե ոնց են ամպերը երկնքում խաղում:

Հանկարծ լսեց, որ մեկը լաց է լինում: Հենց իր կողքին էին լաց լինում, բայց Յալմարը չէր տեսնում, թե ով է ու ասաց.

— Լաց մի՛ լինի, ուզո՞ւմ ես, օգնեմ քեզ:

Լացը դադարեց:

— Դու ո՞վ ես,— հարցրեց Յալմարը:

— Մոռացված ծննդյան օրը: Եվ չգիտեմ, թե ումն եմ:

— Վա՛յ,— ասաց Յալմարը,— ա՛յ քեզ բան: Իսկ տորթ ունե՞ս:

— Իհարկե՛: Առանց տորթի՝ ի՞նչ ծննդյան օր: Իմ տորթի վրա վեց մոմ կա:

— Ուրեմն, այսօր ինչ-որ մեկը վեց տարեկան է դառնում:

«Ի՞նչ լավ է, երբ վեց տարեկան ես,— մտածեց Յալմարը, շատ լավ է, համարյա յոթ տարեկան դառնալու չափ: Հինգ տարին էլ վատ չէ, չորսն էլ՝ ոչինչ: Ա՛յ, ո՛ւրի՞շ ուրի՞շ է, ութ տարեկան որ լինես, արդեն հենց այդքան կմնա, որ չափահաս դառնաս»:

— Ափսո՞ս, շա՛տ ափսոս, որ քեզ չեմ կարող օգնել: Ես ուղղակի չգիտեմ, թե ով է իր ծննդյան օրը մոռացել:

Մաս 4-րդ

Ու Յալմարը տուն շտապեց: Երբ ներս մտավ, տեսավ, որ հայրն արդեն գլխի վրա կանգնած չէր, այլ նստել էր սեղանի մոտ ու ձաշում էր:

— Հիշել եմ,— ասաց փիղ հայրը, — ես այդպես էլ գիտեի, որ դա երեկ էր, կամ վաղը, կամ էլ՝ այսօր: Հենց այդպես էլ գիտեի:

— Ի՞նչն է այսօր,— հարցրեց Յալմարը:

— Այսօր քո ծննդյան օրն է,— սենյակ մտնելով ասաց փիղ մայրը, — այսօր քո վեց տարին լրացավ:

Յալմարը ուրախացավ, շա՛տ հուզվեց ու շո՛ւտ վազեց եղեգնուտի մոտի փոքր բլուրը:

— Լսի՛ր,— գոռաց նա, — պարզվում է, որ դու ի՛մ ծննդյան օրն ես: Այսօր ես վեց տարեկան եմ դառնում:

— Ո՛ւիս,— ուրախացավ մոռացված Ծննդյան օրը,— ջա՛ն, ջա՛ն, ջա՛ն:

Երեկոյան թեյելիս, Յալմարը ստացավ իր ծննդյան տոնական տորթը՝ վրան էլ վեց մոմ: Նա կնճիթը ձգե՛ց ու վեցն էլ միանգամից հանգցրեց:

«Ինչ լա՛վ է,— մտածեց նա:— շա՛տ լավ է վեց տարեկան դառնալը»:

Առաջադրանքներ

1. Ընդգծի՛ր պատմության քեզ դուր եկած հատվածը:
2. Պատմի՛ր այս պատմության փղիկի մասին:


3. Ծննդյան օրը ինչո՞ւ էր լաց լինում:

- 4.Դու քանի՞ տարեկան կուզես լինել: Ինչո՞ւ:

4. Սովորաբար ծննդյան օրերը ինչպիսի՞ն են լինում: Նշի՛ր:

ծիծաղկոտ	բազմագույն	տորթահամ
մոայլ	գորշ	անհամ
հրաշալի	տոնական	լուսավոր
քաղցր	դառը	փուշիկաշատ

5. Նկարի՛ր քո ծննդյան օրը:



«Միախար Սեբաստացի» կրթահամալիր

mskh.am

Կազմողներ՝

Արմինե Մնացականյան

Լիլիթ Սահակյան

Հասմին Ղազարյան

Տաթև Սահակյան

Աղբյուրներ՝

Պետրոսյան Աիդա, Մատենիկ 2, 1995

Սիմոնյան Մարիետ, Պետրոսյան Աիդա, Ընթերցարան, 1997

«Տիգրան Հայրապետյան» գրադարան

lib.mskh.am

Լուսինե Փաշայան, Ընթերցարան, 2017

2021 թվական